# ՆՊԱՍՏՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ (EBT) ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

| ԳՈՐԾԻ ԱՆՈՒՆԸ |
|---|
| ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐԸ |

- Իմ Նպաստների Էլեկտրոնային Փոխանցման (EBT) տոմսը և Անձի Ինքնության Համարը (PIN) կարևոր է ապահով պահելը: Իմ, Նշանակված Փոխարինող Տոմսակրի/Լիազորված Ներկայացուցչի, կամ որևէ անձի, որին կամովին տվել եմ իմ EBT տոմսն ու PIN-ը, կատարած ցանկացած EBT գործարք կհամարվի օրինական գործարք և հաշվից հանված ցանկացած նպաստ **ՉԻ** վերականգնվի:

- Եթե իմ EBT տոմսը կորած կամ գողացված է, ես դա կտեղեկագրեմ **ԱՆՄԻՋԱՊԵՍ** զանգելով հաճախորդի սպասարկման կենտրոն 1-877-328-9677 համարով: Ես սա կարող եմ անել օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Ցանկացած նպաստ, որը իմ հաշվից հանվել է հաճախորդի սպասարկման իմ տեղեկացնելուց առաջ **ՉԻ** վերականգնվի:

- Եթե կարծում եմ, որ ինչ-որ անձ, որը երևի գիտի իմ PIN համարը, կցանկանա օգտագործել իմ նպաստները, ես իմ PIN համարը պետք է փոխեմ (ես դա կարող եմ անել անվճար զանգելով հաճախորդի սպասարկման կենտրոն 1-877-328-9677 համարով): Եթե չփոխեմ իմ PIN համարը, մեկ ուրիշի կողմից օգտագործված նպաստները չեն վերականգնվի:

- Ես պիտի համոզված լինեմ, որ բոլոր լիազորված տոմսակիրները, այդ թվում և իմ Նշանակած Փոխարինող Տոմսակիրը/Լիազորված Ներկայացուցիչը, պետք է անմիջապես տեղեկագրեն կորած կամ գողացված EBT տոմսի կամ PIN համարի մասին, որպեսզի չկորցնեմ իմ նպաստները:

---

Ես վկայում եմ, որ կարդացել եմ այս ծանուցագիրը, կամ այն կարդալ եմ տվել ինձ համար, և հասկանում եմ իմ EBT տոմսի մասին այս կարևոր տեղեկությունը:

| ՀԱՃԱԽՈՐԴԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ԹՎԱԿԱՆ |
|---|---|
| | |